# ՌՈՒՍ ԱՌԱՋԱԴԵՄ ՀԱՍԱՐԱԿԱՅՆՈՒԹՅԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆԸ ԱՐԵՎՄՏԱՀԱՅՈՒԹՅԱՆԸ (XIX Դ. 90-ԱԿԱՆ ԹՎԱԿԱՆՆԵՐ)

ՊՈՂՈՍ ՍԻՄՈՆՅԱՆ

*XIX դ. 70—80-ական թվականներին արևմտահայության առանց այն էլ ծանր դրությունը դարձավ առավել անտանելի։ Սուլթանական կառավարության ազգային խտրականությունն ու կրոնական անհանդուրժողականությունը, սոցիալական դաժան շահագործումն ու հարստահարությունները վերածվեցին բացահայտ ֆիզիկական բնաջնջման քաղաքականության։ Օգտվելով արևմտյան մեծ տերությունների թողտվությունից, Աբդուլ-Համիդը ձեռնամուխ եղավ արևմտահայության վաղօրոք կազմված ու մշակված կոտորածների ծրագրի իրագործմանը։ Զանգվածային շարդեր կատարվեցին 1894 թ. հուլիս-օգոստոսին Սասունում, ապա 1894—1896 թթ. ողջ Արևմտյան Հայաստանում ու Օսմանյան կայսրության մի շարք հայաբնակ գավառներում։*

*Բ. Դուռը վախենալով եվրոպական հասարակական կարծիքից, ինչպես նաև մեծ տերությունների կողմից շահադիտական նպատակներով Թուրքիայի ներքին գործերին հնարավոր միջամտության վտանգից, ձգտում էր «ոչնչացնել հայերին քիչ-քիչ, անզգալապես և առանց աղմուկ հանելու...»[1]։ Սակայն հայկական շարդերի մասին լուրերը շուտով տարածվեցին Թուրքիայի սահմաններից հեռու։ Զանազան երկրների թերթերում այդ սահմռկեցուցիչ դեպքերի մասին տպագրվեցին հոդվածներ, փոթորկվեց առաջավոր հասարակության միտքը։*

*Ցարիզմն իր արտաքին ռազմաքաղաքական շահերի թելադրանքով XIX դ. 90-ական թվականներին Թուրքիայի նկատմամբ վարում էր զգուշավոր քաղաքականություն, իսկ հայկական հարցում ժամանակավորապես փոխել էր իր վերաբերմունքը։ Մի կողմից նա չէր ցանկանում կորցնել թուրքահպատակ քրիստոնյա ժողովուրդների՝ դեպի Ռուսաստանն ունեցած հավատն ու ակնկալությունները, իսկ մյուս կողմից՝ երկրում սրվող սոցիալական և ազգային ազատագրական շարժումները, ինչպես նաև Մերձավոր և Հեռավոր արևելքում խառն իրադրությունը նրան ստիպում էին չարել հայկական հարցը։ Հակառակ դրան, հասարակական կարծիքի ճնշման տակ նույնիսկ պաշտոնական մամուլի որոշ օրգաններ («Ս. Պետերբուրգսկիե վեդոմոստի», «Ռուսսկիե վեդոմոստի») կոտորվող արևմտահայության նկատմամբ բռնեցին բարյացակամ գիրք։ Նրանց շուրջը համախմբված լրագրող-հրապարակախոսներ Վ. Գոլմստրեմը, Գ. Սաղոնովը, Գամման, Կոտովիչը, Ս. Կովդունը և Սիգման իրենց հոդվածներով ռուս հասարակայնության առջև բացահայտում էին արևմտահայության կրած տառապանքները, հայկական հարցի էությունը, կոտորածների բուն պատճառներն ու մանրամասները։ Նրանք միաժամանակ մերկացնում էին հայկական հարցում մեծ տերությունների հետապնդած նենգամիտ*

---

1 ՀՍՍՀ ԳԱ պատմության ինստիտուտի արխիվ, Վեռի ֆոնդ, ց. 1, գ. 131, թ. 144։

նպատակները և ռուս ընթերցողին ներկայացնում հայ ժողովրդի բազմադարյան մշակույթը։

1894 թ. հուլիս-օգոստոսին Սասունում տեղի ունեցած հայկական շարժերը[2] ռուս հասարակայնությանը հայտնի դարձան հոկտեմբեր-նոյեմբերին։ «Ս. Պետերբուրգսկիե վեդոմոստի» լրագրում հոկտեմբերին տպագրվեց Սասունում տեղի ունեցած դեպքերի մասին առաջին հոդվածը[3]։ Այնուհետև լրագրի 1895 թ. հունվար-փետրվարի համարներում լայնորեն լուսաբանվեցին «Թուրքական դահիճների ձեռքով իրականացված անմարդկային կոտորածները»[4]։ «Արցունքները հագիվ զսպելով լսում էինք... բազմաթիվ ցնցող պատմություններ այն դաժան տանջանքների մասին,— ընդգծում էր «Ս. Պետերբուրգսկիե վեդոմոստի» լրագիրը,— որ Թուրքերը ենթարկում էին հայերին, հատկապես գյուղական բնակիչներին, կանանց, երեխաների, ծերերի տառապանքների մասին։ Քշում էին նրանց Փոքր Ասիայի խորքերը, այրելով նրանց ունեցվածքն ու գյուղերը»[5]։ 1895—1897 թթ. այս լրագիրը զգալի գեր խաղաց թե՛ թուրքական կոտորածներից Ռուսաստանի սահմաններն անցած արևմտահայերին, թե՛ Արևմտյան Հայաստանում մնացածներին օգնելու գործում։ Նրա էջերում լույս տեսան բազմաթիվ հոդվածներ, հատկապես հրապարակախոս Վ. Գոլմստրեմի հեղինակությամբ, որոնք ռուս ժողովրդին կոչ էին անում սատար լինել կոտորվող հայ ժողովրդին։ «Հայ փախստականները», «Քարերն էլ կաղաղակեն», «Կրկին հայերի մասին», «Եղբայր հայեր» և մի շարք այլ հոդվածներում Վ. Գոլմստրեմը սպանիչ քննադատության էր ենթարկում սուլթանական կառավարությանը, ինչպես նաև նրա արևմտյան հովանավորողներ Անգլիայի ու Գերմանիայի կառավարող շրջաններին։ Նա անհուն վշտով ու ցասումով էր արձագանքում հայկական ողբերգություններին, քննադատում «Նովոյե վրեմյա», «Մոսկովսկիե վեդոմոստի» և «Պրավիտելստվեննիյ վեստնիկ» պաշտոնական ու կիսապաշտոնական թերթերի շուրջը համախմբված այն լրագրողներին, որոնք ելնելով Մերձավոր արևելքում ցարիզմի հետապնդած ռազմաքաղաքական նպատակներից, ազգայնական կրքեր էին բորբոքում ընդդեմ հայության[6]։ Ծանոթանալով Արևմտյան Հայաստանում տեղի ունեցած և «մարդկային երակներում արյունը սառեցնող»[7] իրադարձություններին, հրապարակախոսը գրում էր. «ռուս ընթերցող, քո ձայնն անհրաժեշտ է, քանի որ մեր բոլորի ձայնը միասին կազմում են հասարակական կարծիքը, Ռուսաստանի ձայնը, որը կեղծ չպետք է հնչի։ Քո համագործակցությունն անհրաժեշտ է ոչ միայն հայերին նյութական օգնություն ցույց տալու, այլև Ռուսաստանի հասարակական կարծիքը կեղծ ուղուց դեպի ճշմարիտը շրջելու համար»[8]։ Քննադատելով հայկական հարցում «Մոսկովսկիե վեդոմոստի» և «Նովոյե վրեմ-

---

2 Սուլթանական կառավարությունը 1894 թ. հուլիս-օգոստոսին «Համիդիե» քրդական գնդերի ու կանոնավոր բանակի զորամասերի միջոցով ավերեց Սասունը։ Որի քաշվեց 10.000 մարդ, ավերվեց 102 գյուղ, որոնցից 89-ն իսպառ չնչվեցին երկրի երեսից (Ռուսաստանի արտաքին քաղաքականության արխիվ, ֆ. «քաղարխիվ», գ. 1690, թ. 256—268, գ. 3435, թ. 154—160)։

3 «С. Петербургские ведомости», 1894, № 347.

4 Նույն տեղում, 1895, № 204։

5 Նույն տեղում, 1897, № 7։

6 Նույն տեղում, 1896, № 7։

7 «Братская помощь пострадавшим в Турции армянам», М., 1896. I отд.. с. 5.

8 Նույն տեղում։

յալի» բռնած դիրքը, ըստ որի հայկական ջարդերը Ռուսաստանի ընդհանուր շահերի հետ չէին առնչվում, Վ. Գոլմստրեմը գտնում էր, որ «հայերի կոտորածը բացառապես ուղղված է Ռուսաստանի դեմ»[9], որ հայերին ռեալ օգնություն կարող է ցույց տալ միայն Ռուսաստանը[10]։ 1898 թ. գրված «Աբդուլ Համիդի գինը» հոդվածում Վ. Գոլմստրեմը, վերլուծելով արևմտահայության կյանքում 1894—1896 թթ. տեղի ունեցած ողբերգական իրադարձությունները, համոզիչ փաստերով ջարդերի մեղավոր համարելով Աբդուլ-Համիդին և նրա կառավարությանը, իրավացիորեն նշում էր, որ մեծ տերությունները պետք է սուլթանից մարդկային զոհերի ու նյութական միջոցների փոխհատուցում պահանջեն[11]։

Ռուսաստանի առաջադեմ հասարակական կարծիքի ճնշման տակ ցարիզմը ստիպված եղավ 1896 թ. դեկտեմբերի 11-ի հատուկ օրենքով թույլ տալ երկրում հանգանակություն սկսել փախստական արևմտահայերին օգնելու համար[12]։ Միաժամանակ կովկասյան իշխանություններին ցուցում արվեց հայ գաղթականներին շարգելել բնակություն հաստատելու կայսրության ներքին նահանգներում, եթե վերջիններս կընդունեին ռուսահպատակություն[13]։ Այդ օրենքի հրապարակումից հետո «Ս. Պետերբուրգսկիե վեդոմոստի», «Ռուսսկիե վեդոմոստի», «Մշակ» և «Արձագանք» թերթերի խմբագրություններին կից ստեղծվեցին արևմտահայության օգտին հանգանակություն կատարող հատուկ բաժիններ, որոնք հավաքված միջոցները տալիս էին կովկասյան իշխանություններին՝ համապատասխան նպատակով օգտագործելու համար։ Կովկասում տեղական իշխանության մարմինները նույնիսկ իրենց ձեռքը վերցրին օգնության կազմակերպման գործը։ Հատկապես օգտակար գործ կատարեցին Կարսի մարզի և Թբիլիսիի ու Երևանի նահանգապետությունների ծառայողները[14]։

Ռուս սահմանապահները, անկարող լինելով աչք փակել կատարվող կոտորածների հանդեպ, հաճախ իշխանություններից գաղտնի, թուրքական յաթաղանից մազապուրծ հայերին թույլ էին տալիս անցնելու սահմանը[15]։ Մահվան սարսափի տակ իրենց պապենական օջախները լքած հայերը Ռուսաստանը դիտում էին փրկության միակ հանգրվան[16]։ Եվ պատահական չէ, որ Կ. Պոլսի ռուսական դեսպանատանը, ինչպես նաև Էրզրումի հյուպատոսարանում փրկություն որոնող հայերին իրենց պաշտպանության տակ վերցրին ռուս պաշտոնյաներն ու հասարակ ծառայողները[17]։

Հայ փախստականներին օգնելու մասին ռուսական կառավարության որոշման ընդունումից հետո «դժբախտ հայ գաղթականների նկատմամբ մեծացավ ռուս հասարակայնության հոգատարությունը, իսկ օգնության ձեռնարկումները դրվեցին լայն ու բնական հիմքերի վրա»[18],— գրում էր «Ս. Պետերբուրգսկիե վեդոմոստի» թերթը։

---

9 Նույն տեղում։

10 «С. Петербургские ведомости», 1898, № 362.

11 Նույն տեղում։

12 Նույն տեղում։

13 ՀՍՍՀ ԳԱ պատմության ինստիտուտի արխիվ, Լեոի ֆոնդ, ց. 1, գ. 269, թ. 38։

14 «С. Петербургские ведомости», 1896, № 7.

15 «Новое обозрение», 1896, № 74.

16 «С. Петербургские ведомости». 1897, № 284.

17 «Новое обозрение», 1896, № 172.

18 «С. Петербургские ведомости», 1897, № 290.

Արևմտահայության օգտին հանգանակություններ կատարվեցին ռուսական կայսրության գրեթե բոլոր նահանգներում[19]։ Ռուս հասարակայնության բոլոր սոցիալական շերտերն իրենց մասնակցությունը ցուցաբերեցին այդ գործում։ Հավաքված գումարն օգտագործվում էր գաղթականների համար ապաստարաններ հիմնելու և սնունդ հայթայթելու նպատակով[20]։

Կ. Պոլսի ռուսական դեսպանությունը վիլայեթներում եղած ռուսական հյուպատոսություններից մանրամասն զեկույցներ ստանալով կոտորածների հետևանքով որբացած հազարավոր հայ մանուկների անօգնական ու դժբախտ գրության մասին, հայոց պատրիարքի հետ միասին ձեռնամուխ եղավ նրանց համար ապաստարաններ հիմնելու գործին[21]։ Կ. Պոլսում ռուսական դեսպան Ի. Զինովիևը, ինչպես նաև դեսպանության մյուս աշխատողներն իրենց անձնական միջոցներից անգամ որոշակի գումար տրամադրեցին արևմտահայության օգնության ֆոնդին[22]։

Ռուս առաջադեմ մի խումբ մտավորականներ (Վ. Բրյուսով, Յու. Վեսելովսկի, Մ. Նիկոլսկի, Ն. Մառ, Ա. Կրիմսկի, Վ. Գերյե, Ա. Գրեն, Լ. Կոմարովսկի, Վ. Շուֆ, Ի. Բունին, Ա. Ալիբեկով, Վ. Գոլմստրեմ, Ա. Սիրոմյատնիկով (Սիգմա), Վ. Սոլովյով) հրապարակեցին «Եղբայրական օգնություն Թուրքիայում տուժած հայերին» ժողովածուն, որի հրապարակման նպատակների մասին «Ս. Պետերբուրգսկիե վեդոմոստի» լրագիրը գրում էր. «Ռուս հասարակայնությանը հայերի հետ ծանոթացնելու նպատակով գրքում բերված են մի շարք հոդվածներ այդ ժողովրդի կյանքի տարբեր կողմերի, նրա պատմության, գրականության, Ռուսաստանի հետ նրա բարեկամության նշանակության մասին»[23]։

1896 թ. Մոսկվայի պետական համալսարանի իրավաբանության ամբիոնի աշխատակիցների ջանքերով և Լ. Կոմարովսկու առաջաբանով հրապարակվեց «Հայերի վիճակը Թուրքիայում մինչև 1895 թվականին մեծ տերությունների միջամտությունը» ժողովածուն, որում թարգմանաբար ամփոփվեցին Ռ. Ժեկմենի, Մերկորմ Մակ-Կոլի, Է. Դիլոնի և Դ. Գրինի գործերը՝ նվիրված արևմտահայությանը և հատկապես թուրքական կառավարության հայաջինջ քաղաքականության բացահայտմանը։ Նշված երկու ժողովածուները մեծ հաջողություն ունեցան և արագ սպառվեցին։ Այդ հանգամանքը «Եղբայրական օգնություն Թուրքիայում տուժած հայերին» ժողովածուի խմբագրությանը ստիպեց այն վերահրատարակել[24]։ Երկու հրատարակություններից ստացված գումարը տրամադրվեց արևմտահայության օգնության ֆոնդին։

Կ. Պոլսի ռուսական դեսպանի ու հայոց պատրիարքի միջոցով «Եղբայրական օգնություն Թուրքիայում տուժած հայերին» ժողովածուի խմբագրությունից ստացված գումարով Արևմտյան Հայաստանում հայ որբերի համար հիմնվեցին ապաստարաններ[25]։ Առաջին ապաստարանը հիմնվեց Դիարբեքիրի վիլայեթի Բալու քաղաքում[26]։ Ապաստարաններ բացվեցին նաև Վանում, Մու-

19 ՀՍՍՀ ԳԱ պատմության ինստիտուտի արխիվ, Լենի ֆոնդ, ց. 1, գ. 269, թ. 12։
20 «С. Петербургские ведомости», 1897, № 20.
21 Նույն տեղում, № 302։
22 ՀՍՍՀ ԳԱ պատմության ինստիտուտի արխիվ, Լենի ֆոնդ, ց. 1, գ. 141, թ. 1։
23 «С. Петербургские ведомости», 1897, № 302.
24 Նույն տեղում, № 284։
25 Նույն տեղում, № 302։
26 Նույն տեղում, նաև 1900, № 107։

շում և Էրզրումում՝ թվով 10 հատ։ Կ. Պոլսում ապաստարան բացվեց հայ աղջիկ որբերի համար[27]։ 1900 թ. Արևմտյան Հայաստանում տարածված սովի ժամանակ «Եղբայրական օգնություն Թուրքիայում տուժած հայերին» ժողովածուի խմբագրությունը Կ. Պոլսի ռուսական դեսպանատան միջոցով սովյալներին տրամադրեց 5000 ռուբլի[28]։

Նույնիսկ ամենասուղ միջոցներով ապրող ռուս հասարակ մարդիկ իրենց կոպեկները տրամադրում էին արևմտահայ սովյալներին օգնելու համար[29]։ Կայսրության ամենահեռավոր նահանգներում անգամ գյուղացիներն իրենց համայնքի ժողովներում քննարկման առարկա էին դարձնում խոշտանգված արևմտահայությանն օգնելու հարցը և միջոցներ տրամադրում օգնության ֆոնդին։ Ավելին, Արխանգելսկի նահանգի Շենկարսկ գյուղի համայնքի ժողովում գյուղացիները կառավարությանը կոչ արեցին գործարար օգնություն ցույց տալ հայերին և ճնշում գործադրել սուլթանի վրա՝ կոտորածները դադարեցնելու համար[30]։ Արևմտահայության օգնության ֆոնդին զգալի միջոցներ տրամադրեցին նաև Մոսկվայի, Պոդոլսկի, Վոլոգդայի, Սամարայի (Կույբիշևի) և Վլադիմիրի նահանգների գյուղական շատ համայնքներ, Նովգորոդի, Ստարայա Ռուսի, Մոսկվայի, Կուրսկի, Իվանովո-Վոզնեսենսկի, Գրյազնովի, Ուստ-Սիսոլսկի քաղաքացիները, Կուրանի և Թերեքի ռազմական օկրուգների կազակությունը[31]։

Ռուսական թատերասիրական ընկերությունները արևմտահայերին օգնելու նպատակով կազմակերպեցին ներկայացումներ, իսկ Կուբանի մանուֆակտուրաներն օգնության ֆոնդին հատկացրին մեծ քանակությամբ գործվածքեղեն[32]։ Ռուսական ուղղափառ եկեղեցին նույնպես անմասն չմնաց այդ ձեռնարկումներից։ Նրա օրգան «Պրավոսլավնիյ սոբեսեդնիկը» բազմիցս իր էջերում տպագրում էր հայասիրական հոդվածներ, որոնք դրվատվում էին Վ. Գոլմստրեմի կողմից։ Հեռավոր հյուսիսից արևմտահայությանն օգնելու կոչով հընչեց Կրոնշտադտի վանքի վանահոր ձայնը։ Նա օգնության ֆոնդին նվիրեց 200 ռուբլի[33]։ Վանահոր այդ կոչը գնահատվեց որպես «ամենամարդկային արարք»[34]։

Արևմտահայությանն օգնելու մարդասիրական զգացմունքները ռուս հասարակայնության մեջ ջերմացվում էին «Ս. Պետերբուրգսկիե վեդոմոստի» լրագրում հայ գրողների գործերի տպագրումով[35], ինչպես նաև հայասիրական բովանդակություն ունեցող հոդվածներով։ Ընթերցող հասարակայնության վրա առանձնապես ցնցող տպավորություն գործեց «Հայ որբերը» հոդվածը[36], որի շնորհիվ լրագրի հաջորդ համարները լցվեցին արևմտահայության օգնության ֆոնդին կատարված հանգանակությունների նորանոր ցուցակներով։ Հոդվածի հեղինակը ներկայացնում էր ջարդերի հետևանքով որբացած հազարավոր թշ-

27 Նույն տեղում, 1897, № 302։
28 Նույն տեղում, 1900, № 107։
29 «Русские ведомости», 1896, № 158.
30 «С. Петербургские ведомости», 1897, № 110.
31 Նույն տեղում։
32 Նույն տեղում։
33 Նույն տեղում։
34 Նույն տեղում, № 2։
35 Նույն տեղում, № 221։
36 Նույն տեղում։

վառ, սոված ու բոկոտն հայ որբերի ծանր կացությունը[37]։ «Ի՞նչը կարող է ավելի ծանր ու անհույս լինել, քան այդ ընչազուրկների ճակատագիրը,— գրում էր նա,— ի՞նչը կարող է լինել ավելի տխուր ու թախծալի, քան այն, երբ դժբախտ փոքրիկները վաղ մանկությունից կորցնելով հայրերին ու մայրերին, ղրկվելով նրանց նուրբ փաղաքշանքներից ու հոգատարությունից, ստիպված են ընդառաջ գնալ կենցաղային տարբեր արհավիրքների և ապրել բարի մարդկանց պատահական ողորմությամբ»[38]։ Հոդվածագիրը ռուս հասարակայնության ուշադրությունն էր հրավիրում այն փաստի վրա, որ հազարավոր հայ որբեր մատնվել են բախտի դաժան քմահաճույքին։ «Բարի ու մեծահոգի Ռուսիա, մի՞թե կարող ես լուռ մնալ և օգնության ձեռք չպարզել նրանց»[39],— գրում էր նա։ Մերկացնելով ու անարգանքի սյունին գամելով արևմտյան մեծ տերությունների գիշատիչ քաղաքականության էությունը, հոդվածագիրն իր զայրույթն էր ուղղում նրանց գործակալների՝ Արևմտյան Հայաստանում գործող միսիոներների դեմ, որոնք հայկական կոտորածների ընթացքում և հետո ակտիվացրին իրենց կեղծ բարեպաշտական գործունեությունը, աշխատելով ավելի շատ հայ երեխաների հարկադրել խզելու կապերը մայր ժողովրդի հետ։ Արևմտյան միսիոներներն իրենց այդ գործողություններով, հոդվածագրի արտահայտությամբ, «ավելի վատթար ձևով էին շարունակում թուրքական ջարդարարների սև գործը»[40]։ Հայ որբերի հետ նրանք վարվում էին ինչպես վերջին ստահակներ, առաջարկելով հետևյալը. «Ես քեզ կտամ մի կտոր հաց, իսկ դու հրաժարվիր քո պապերի դավանանքից»[41]։ Հայ ժողովրդի վերջնական փրկությունը թուրքական ստրկությունից պետք է կատարվի Ռուսիայի օգնությամբ[42], եզրակացնում էր հոդվածագիրը։

Արևմտահայության ողբերգական կացությունը և մասսայական կոտորածները սրտացավությամբ էին լուսաբանում նաև «Նովոստի», «Լուչ», «Նեդելյա», «Ռուսսկայա միսլ», «Միր բոժիյ» թերթերն ու ամսագրերը։ Նրանք ռուս հասարակայնությանը կոչ էին անում զերծ մնալ պաշտոնական պրոպագանդայի շովինիստական թույնից և օգնել «փառավոր անցյալ ունեցող մի չափազանց ընդունակ ազգի», որն անարդար կերպով կեղեքվում ու կոտորվում է թուրքական բռնապետության կողմից[43]։ Բաժանելով հայ ժողովրդի նկատմամբ նշված լրագրերի ու ամսագրերի տածած մեծ համակրանքը, Անդրկովկասում հրատարակվող «Տիֆլիսսկիյ լիստոկը» գրում էր. «Մի դրոշակի տակ թափվել են հայկական ու ռուսական արյունը»[44], ուստի ռուս ժողովուրդը պետք է օգնություն ցույց տա հայ ժողովրդին։ Թերթն իրավացիորեն տագնապում էր օրհասական դրության մեջ գտնվող արևմտահայության արյունաքամ ներկայի ու անհեռանկար ապագայի համար։ «Նման դրությունը չի կարող երկար տևել։ Անհրաժեշտ է այն վերջացնել կամ խաղաղ, կամ էլ մեկ այլ ուղիով»,— գրում էր «Տիֆլիսսկիյ լիստոկը»[45]։

37 Նույն տեղում։
38 Նույն տեղում։
39 Նույն տեղում։
40 Նույն տեղում։
41 Նույն տեղում։
42 Նույն տեղում։
43 «Новости», 1895, № 62.
44 «Тифлисский листок», 1894, № 78.
45 Նույն տեղում, 1903, № 14։

Ռուս առաջադեմ մտածողները 1897 թ. Պետերբուրգում կազմակերպեցին «Ռուս-հայկական ընկերություն», որն իր առջև խնդիր էր դրել ուսումնասիրել հայ ժողովրդի անցյալը, պարզաբանել նրա դեմ սուլթանական կառավարության վարած արյունոտ քաղաքականության մութ ծալքերը, հայերին պաշտպանել ռեակցիայի անարդար հարձակումներից, օգնել չարդերից մազապուրծ փախստականներին ու պատսպարել նրանց[46]։ Ռուս ժողովրդից օգնության ակնկալիքներ ունեցող հայ ժողովրդի համար նման մի կազմակերպության ստեղծումը մեծ նշանակություն ուներ։ Այդ առթիվ «Մշակը» գրում էր. «Այն ցանկալի է մանավանդ այժմ, երբ խավարի որդիք, քաղաքական ու գրական աֆերիստները ձեռք-ձեռքի տված ձգտում են ռուսաց մեծ ազգի մեջ ատելություն սերմանել դեպի փոքրիկ հայ ազգությունը»[47]։

«Ռուսսկայա միսլը» հակադրվելով ռեակցիոն շրջանների հակահայկական վերաբերմունքին, գտնում էր, որ «հայ ժողովրդին չպետք է բնորոշել ժողովրդական օրգանիզմից պոկված և հաշվենկատությամբ գործող առևտրականների ամբոխով, այլ պետք է տեսնել անխոնջ աշխատանքով տարված, քրտինքը դեմքին, համակրելի արտաքինով հայ հողագործին»[48]։ Միաժամանակ ամսագիրը կեղծ ու ստահոդ էր համարում ցարական պաշտոնական շրջանների ու նրանց ձայնափող լրագրողների այն պնդումները, թե իբր թուրքական կառավարությունը արևմտահայության համար ստեղծել է ապրելու «իդեալական պայմաններ»[49]։ «Ռուսսկայա միսլը» հայերի մասսայական կոտորածների հանցավոր էր ճանաչում թուրքական կառավարությանն ու մեծ տերություններին, քանի որ վերջիններս, Մերձավոր արևելքում ունենալով ռազմաքաղաքական ու տնտեսական հատուկ շահեր, հովանավորում ու աջակցում էին սուլթանին[50]։ Մերժելով ցարական պաշտոնական շրջանների այն հայտարարությունները, թե իբր հայերն են առաջինը զենք բարձրացնում թուրքական կառավարության դեմ, «Ռուսսկայա միսլը» իրավացիորեն նկատում էր. «Ինչո՞ւ հայերին հանցավոր համարել. այն բանի համա՞ր, որ նրանք էլ ուրիշների նման պահանջում են գոյության իրավունք... ինչո՞ւ մեղադրենք նրանց, երբ նրանք տեսնելով իրենց անխուսափելի կորուստը, միևնույն է՝ մնան սուլթանին հնազանդ, թե ապստամբեն, նախամեծար են համարում մեռնել զենքը ձեռքներին, քան անտարբեր հանդիսատես լինեն, թե ինչպես են ջարդվում ու ոչնչացվում»[51]։ Ամսագրի շուրջը համախմբված առաջադեմ մտավորականները ճիշտ էին, գտնելով, որ արևմտահայերի ջարդերը հետևանք են ոչ թե կառավարության հանդեպ հայերի անհնազանդության, այլ նրանց բնաջնջելու նպատակով օսմանյան բռնապետության որդեգրած քաղաքականության։ Հետևողականորեն արդարացնելով արևմտահայության ազգային ազատագրական շարժումները, ամսագիրը մերժում էր ցարական որոշ պաշտոնյաների այն հայտարարությունները, թե իբր սուլթանն իրավասու է բոլոր միջոցներով ճնշելու իր հպատակների «խռովությունները» և երկրում «վերահաստատելու կարգը»[52]։

46 «Луч», 1897, № 185.
47 «Մշակ», 1897, № 33։
48 «Русская мысль», 1896, кн. XI, с. 112.
49 Նույն տեղում, էջ 109։
50 Նույն տեղում, գ. XII, էջ 106։
51 Նույն տեղում, 1897, գ. X, էջ 75։
52 «Московские ведомости», 1895, № 6.

«Ռուսսկայա միսլին» արձագանքում էր «Նեդելյա» շաբաթաթերթը։ Քննադատելով ռուսական մեծապետական շովինիզմի գաղափարախոսներին, «Գերված ժողովուրդ» հոդվածի հեղինակն ընթերցողին էր ներկայացնում պատմական հարուստ անցյալ ու զարգացած մշակույթ ունեցող, սակայն թուրքական գազանությունների հետևանքով բնաջնջման եզրին հասած արևմտահայությանը, աշխատելով ռուս ժողովրդի մեջ նրա նկատմամբ մարդասիրական վեհ զգացմունքներ արթնացնել[53]։

Կիևի համալսարանի պրոֆեսոր Ա. Գրենի կողմից հրատարակվող «Ռոսսիա ի Ազիա» լրագրում լույս տեսան նրա «Հայերի դերը համաշխարհային պատմության մեջ» և «Հայերը Կովկասը Ռուսաստանին միացնելու ժամանակ»[54] ուշագրավ հոդվածները։ Այդ հոդվածներում տիրապետող ձգտումը հայ ժողովրդին օգնության ձեռք մեկնելու կոչն է[55]։ Հակադրվելով «Մոսկովսկիե վեդոմոստի» թերթի կողմից հայ ժողովրդին անհիմն կերպով անջատողական տրամադրություններ վերագրելուն, Ա. Գրենն այդ հոդվածում եզրակացնում էր, որ հայերի ձգտումը «զուտ կուլտուրական է և ոչ քաղաքական, վերադրել նրանց անջատողականություն, հավասար է ազգի ոգին չհասկանալուն»[56]։

Հետադիմական ուժերի դեմ ռուսական առաջադեմ մամուլի օրգանների և մտավորականների մղած պայքարի մասին «Մշակը» գրում էր. «Ռուս մամուլի մի քանի օրգաններ («Ռուսսկայա միսլ», «Ռուսսկիե վեդոմոստի», «Ս. Պետերբուրգսկիե վեդոմոստի») որոշել են սառը ջուր լցնել շովինիստ և խավարամիտ լրագրերի գլխին։ Ամեն մի քայլում անխնա հարվածում են «Նովոյե վրեմյա», «Գրաժդանին», «Մոսկովսկիե վեդոմոստի» և սրանց արժանավոր արբանյակների որոշ նպատակով գրվող ինսինուացիաները հայերի դեմ»[57]։

Ռուս առաջադեմ հասարակայնության ցուցաբերած մարդասիրական վերաբերմունքը երախտապարտ հայ ժողովուրդը չէր կարող աննկատ թողնել։ Վրացական ՍՍՀ պետական կենտրոնական պատմական արխիվում պահպանվել է մի խումբ արևմտահայերի՝ «Գոլոս» թերթին ուղղած նամակը, որտեղ նշվում է. «Մի բուռ բազմաչարչար ժողովուրդ, ի դեմս էրզրումցի հայերի, Ձեզ հայտնում է իր երախտագիտության անսահման զգացումը՝ արգարության խոսքի ու պաշտպանության համար, որը դուք բոլորդ մեծ խանդավառությամբ արտահայտում եք «Գոլոսի» էջերում։ Թերթը շատ զգայուն է օսմանյան կիսալուսնի լծի տակ հեծող մեր ազգի ձայնի նկատմամբ. դարերով ճնշված մեր ժողովուրդը երախտագիտության արցունքներ է հեղում»[58]։

Արևմտյան Հայաստանում տեղի ունեցող հայկական կոտորածների լուրը բողոքի ու զայրույթի ալիք բարձրացրեց նաև ռուս ուսանողության միջավայրում։ Նրանք համակրանքով էին վերաբերվում արևմտահայության ազատագրական ընդվզումներին։ Մոսկվայի բուհերի առաջադեմ ուսանողները, դիմելով տեղի հայ ուսանողներին և անջրպետվելով արևմտահայության հանդեպ

---

53 «Неделя», 1895, № 41.

54 «Россия и Азия», 1898, № 15—16.

55 Նույն տեղում։

56 Նույն տեղում։

57 «Մշակ», 1897, № 37։

58 Մեջբերումը տե՛ս Ш. В. Мегрелидзе, Закавказье в русско-турецкой войне 1877—1878 гг., Тбилиси, 1971, с. 280.

ցարական կառավարության անբարյացակամ դիրքորոշումից, հայտարարում էին. «Ոչ մի կապ չունենք այն ընթացքի հետ, որ բռնել են դեպի մեր գործը մեր ընդհանուր թշնամիները, ազատության ու առաջադիմության թշնամիները, որոնց համար կառավարությունը մի զենք է, իսկ ժողովուրդը, բացառյալ իրենց դասակարգի անձնավորությունները, շահագործման նյութ։ Մեր ամբողջ համակրանքը ձեր կողմն է՝ հանուն ազատության կռվողների կողմը։ Մեր զգացումները այլ կերպ չեն էլ կարող լինել, քանի որ մենք ևս կրում ենք բռնակալության ճնշումը»[59]։ Նրանք, արտահայտելով ժողովրդական Ռուսաստանի ընդհանուր վերաբերմունքը դեպի ազատաբաղձ հայ ժողովուրդը, գրում էին. «Մենք հավատացած ենք, որ մեր խոսքերի տակ կստորագրեն բոլոր այն երիտասարդները, որոնք դուրս են եկել բանվորական դասակարգից, ինչպես և մեզ կմիանան մնացյալ մասի առաջադիմական տարրերը»[60]։

Վ. Բրյուսովի, Յու. Վեսելովսկու, Ի. Բունինի, Ն. Մառի, Մ. Նիկոլսկու հոդվածների ու թարգմանությունների միջոցով ռուս ընթերցողները ծանոթացան հայ ժողովրդի բազմադարյան հարուստ պատմությանն ու պոեզիայի գոհարներին։ Նրանք բանաստեղծական խոսքի պատկերավորման հնարանքներով, հրապարակախոսական կրակոտ հոդվածներով ու գիտական ծանրակշիռ գործերով բացահայտում էին Արևմտյան Հայաստանում տեղի ունեցող ողբերգական իրադարձությունները և մերկացնում նրա մեղավորներին՝ ռուս ընթերցողի հոգում ջերմ համակրանք առաջացնելով հայ ժողովրդի նկատմամբ։

Դեռևս 1897 թ. Յու. Վեսելովսկին, մասնակցելով «Եղբայրական օգնություն Թուրքիայում տուժած հայերին» ժողովածուի ստեղծման աշխատանքներին, նրանում լույս ընծայեց հայ գրականության նոր շրջանի վերաբերյալ մի հոդված[61], իսկ հետագայում Արևմտյան Հայաստանում տեղի ունեցող ողբերգական իրադարձությունների հետ կապված իր խոհերն ու ապրումները շարադրեց «Թուրքահայաստանի ողբերգությունը» գործում[62]։ Նա իրավացիորեն գտնում էր, որ հայկական ջարդերը պլանավորվել ու կենսագործվել են թուրքական կառավարության կողմից[63]։

Բազմաշարշար հայ ժողովրդի նկատմամբ անհուն սեր էր տածում Վ. Բրյուսովը։ Դրա արգասիքն էին նրա հրատարակած «Հայ ժողովրդի պոեզիան հին ժամանակներից մինչև մեր օրերը» և «Հայ ժողովրդի պատմական ճակատագրի տարերգությունը» նշանավոր գործերը։ Վ. Բրյուսովը ռուս իրականության մեջ հայ արվեստի ու գրականության պրոպագանդիստն էր և ռուս ընթերցողի համար դրանց ֆմացությունը համարում էր պարտադիր[64]։ «Յուրաքանչյուր զարգացած մարդու համար,— գրում էր նա,— որը հետաքրքրվում էր մեծ իրադարձություններով... Հայաստանի պատմությունը յուրահատուկ գանձարան է, որից կարելի է ստանալ շատ բան»[65]։ Անդրադառնալով արևմտահայու-

---

59 ՍՄԿԿ Կենտկոմին առընթեր մարքսիզմ-լենինիզմի ինստիտուտի հայկական մասնաճյուղի կուսարխիվ, ֆ. 4033, ց. 1, գ. 127, թ. 1—2։

60 Նույն տեղում։

61 Ю. Веселовский, К характеристике новой армянской литературы («Братская помощь пострадавшим в Турции армянам», I отд., с. 590—598).

62 Ю. Веселовский, Трагедия Турецкой Армении, М., 1915.

63 Նույն տեղում, էջ 47։

64 В. Брюсов, Летопись исторических судеб армянского народа, М., 1918, с. 10.

65 Նույն տեղում, էջ 7—8։

թյան կոտորածներին, Վ. Բրյուսովն արդարացի կերպով նշում էր, որ թուրքական կառավարողների դաժան ճնշումն ու հարստահարումները հայերին ստիպեցին ոաքի ելնել ջարդարարների դեմ[66]։ Պայքարի առաջին օրինակները ավելին 1894 թ. սասունցիները, ապա ղեյթունցիները, որոնք 1895 թ. հոկտեմբեր-դեկտեմբերին դիմադրավեցին թուրքական գերակշիռ ուժերին[67]։ Հետևաբար, կոտորածների մեղքն ամբողջությամբ ընկնում է թուրքական կառավարության վրա, քանի որ օսմանյան դաժան ռեժիմն ու մշտական հալածանքներն էին հայերին ստիպել դիմելու ինքնապաշտպանական մարտերի։ Վ. Բրյուսովը մեծ հավատով էր նայում դեպի հայ ժողովրդի ապագան, գտնելով, որ դարերի հնություն ու «նման պատմություն ունեցող ժողովուրդը մեռնելու իրավունք չունի»[68]։ Հայ ժողովրդի երկու հատվածների միավորման միակ միջոցը նա համարում էր ռուս ժողովրդի անկաշառ օգնությունը, որովհետև «հայ ժողովրդի պատմական բախտը սերտորեն կապված է մեր (ռուս ժողովրդի—Պ. Ս.) բախտի հետ»[69]։

Անվանի բանաստեղծներ Վ. Շուֆը[70], Ե. Մորեղովը և Շ. Ալիբեկովն[71] իրենց գործերում պատկերում էին արևմտահայության թշվառ դրությունը, ինչպես նաև կոտորածների մանրամասները։

Այսպիսով, ի հակադրություն ցարական պաշտոնական շրջանների ու նրանց ձայնափող հետադեմ հրապարակախոսների, որոնք, պաշտպանելով Մեծավոր արևելքում ցարիզմի որդեգրած քաղաքականության նոր ուղղությունը, ձգտում էին 1890-ական թվականներին Արևմտյան Հայաստանում ու Օսմանյան կայսրության հայաբնակ մի շարք վիլայեթներում թուրք ջարդարարների ձեռքով կատարված կոտորածները կա՛մ լռության մատնել, կա՛մ էլ դրանց մեղքը բարդել հայերի վրա, ռուս առաջադեմ մտածողներն անում էին ամեն ինչ. հայ ժողովրդի արևմտյան հատվածին օգնելու համար։

## ПОМОЩЬ ПЕРЕДОВОЙ РУССКОЙ ОБЩЕСТВЕННОСТИ ЗАПАДНЫМ АРМЯНАМ (90-ые годы XIX в.)

ПОГОС СИМОНЯН

### Резюме

В 90-ых годах XIX столетия султанское правительство развязало в Западной Армении массовую резню армян.

Вопреки официальным кругам царской России (которые, руководствуясь своими военно-политическими планами на Ближнем Востоке, обходили молчанием резню армян), русские передовые деятели с огромной симпатией относились к западным армянам, оказывая им активную моральную и материальную помощь.

---

66 Նույն տեղում, էջ 100։

67 Նույն տեղում։

68 Նույն տեղում։

69 Նույն տեղում։

70 В. Шуф, Своротов. М., 1898, с. 98—101.

71 «Братская помощь пострадавшим в Турции армянам», II отд., с. 162—187.